

**Տ. ԽՈՐԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴՔԵԿՅԱՆԻ՝ ԵՐԵՎԱՆԻ
ՓՈԽԹԵՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆԸ (1909-1914թթ.)**

Ք. Խ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ԳՊՀ պատմության ամբիոնի դասախոս

1909 թվականի փետրվարի 1-ին Երևանի թեմի պատգամավորական ընդհանուր ժողովը ձայների բացարձակ մեծամասնությամբ թեմի առաջնորդ է ընտրում Տ. Խորեն վարդապետ Մուրադբեկյանին¹: Սակայն ցարական կառավարությունը, դեռևս իր աչքի տակ ունենալով 1903 թվականի դեպքերը և Մուրադբեկյանին դիտելով որպես ըմբոստ հոգևորական², չի հաստատում այդ ընտրությունը:

1909 թվականին կաթողիկոս է ընտրվում Տ. Տ. Մաթեոս Բ. Իզմիրլյանը, որը անմիջապես նախաձեռնում է Էջմիածնում որոշ սահմանադրական բարեփոխումներ՝ կարգադրելով ընտրել դիվանական խորհուրդ՝ կոլեգիալ բնույթ տալով կաթողիկոսի դիվանապետի պաշտոնին³: Կատարված ընտրությունների արդյունքում ամենաշատ քվե ստանում է Խորեն վարդապետ Մուրադբեկյանը, սակայն վարդապետը հրաժարվում է այդ պաշտոնից և Ամենայն Հայոց Կաթողիկոսի ցանկությամբ 1909թ. սեպտեմբերի 24-ի սրբատառ կոնդակով նշանակվում է Էջմիածնում դիվանական խորհրդի անդամ⁴,

¹Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 57, ց. 2, գ. 202, թ. 4:

²1903թ. հունիսի 12-ի հրամանով ցարական կառավարության կողմից բռնագրավվեցին հայ եկեղեցու կալվածքները, գույքը: Փակվում են նաև ծխական դպրոցները: Նոր Բայազետում Խորեն Մուրադբեկյանի նախաձեռնությամբ այդ առթիվ տեղի ունեցան հակապետական, ժողովրդական խոշոր ցույցեր: Մինչ այդ Խրիմյան կաթողիկոսի կարգադրությամբ Խորեն վարդապետը գործուղվել էր Շուշի, որտեղ նրա կողմից կազմակերպվում են բողոքի ցույցեր՝ եկեղեցական կալվածքների գրավման առթիվ: Շուշիից վերադառնալով Էջմիածին՝ Խորեն Մուրադբեկյանը մասնակցում է Էջմիածնում եկեղեցական կալվածքների գրավման առթիվ կայացած բարձր հոգևորականության ժողովին, ապա վերադառնում Նոր Բայազետ: Նոր Բայազետի և Շուշիի ժողովրդական ցույցերը պատճառ դարձան, որ ցարական կառավարությունը երիտասարդ վարդապետին աքսորի:

³ՀԱԱ, ֆ. 319, գ. 310, թթ. 1-15:

⁴ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ.1697, թթ. 17-18:

պաշտոնավարում շուրջ երկուսուկես ամիս: Այդ ընթացքում նա ընտրվում է Սբ. Էջմիածնի Մայր Տաճարի վերանորոգման, նոր շինությունների կառուցման ու բարեգարդման համար կազմված մասնախմբի անդամ¹, իսկ հոկտեմբերի 18-ին միաբանական ժողովի կողմից ընտրվում է վանական կանոնադրություն մշակող հանձնաժողովի անդամ²:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Մաթեոս Բ Իզմիրլյանն իր հայրապետության առաջին իսկ օրերից առանձնակի ուշադրություն էր դարձրել Խորեն վարդապետի բացառիկ ընդունակություններին, ծանոթացել էր նրա՝ շուրջ ինը տարվա գործունեությանը: Տ. Խորեն վարդապետ Մուրադբեկյանն այդ ընթացքում հասցրել էր լինել երկու վիճակների՝ Նոր Բայազետի և Դարաշիչակի փոխանորդ³ և իր վարչական ընդունակությունների ու կուսակրոն եկեղեցականից պահանջվող բոլոր առաքինությունների շնորհիվ արդեն մեծ համբավի էր հասել: Խորեն վարդապետ Մուրադբեկյանը գրավել էր ոչ միայն իր հավատացյալ հոտի սերն ու համակրանքը, այլ նաև ակնածության և համակրանքի մթնոլորտ էր ստեղծել դեպի իր անձը ռուս և մահմեդական ազգաբնակչության մեջ: Այլադավան և այլազգի այս տարրերի նման զգացումները հետևանք էին Խորեն վարդապետի շիտակ, ուղղամիտ և լոյալ այն փոխհարաբերությունների, որը նա հաստատել էր օտար հոգևորականության և ռուս պետական պաշտոնատար անձանց հետ: Հայտնի իրողությունն էր ռուսական ուսումնական տեսչության ներկայացուցչության մեծապետական հայատյաց վերաբերմունքը հայկական դպրոցների գոյության հանդեպ, և Խորեն վարդապետ Մուրադբեկյանը շատ դեպքերում վանել և կասեցրել էր պետական ուսումնական տեսչության անտեղի կարգադրությունները:

Նկատի առնելով դա՛ երիտասարդ կուսակրոնի համեմատաբար ոչ երկար ժամանակաշրջանում ցուցաբերած այսքան ազգօգուտ բեղմնավոր գործունեությունը, ուշադրության առնելով Երևանի լայնածավալ հայրապետական թեմի պատգամավորական ժողովի միահամուռ,

¹Նույն տեղում, գ. 159, թ. 2:

²Նույն տեղում, գ. 129, թթ. 18-19:

³1901 թվականի դեկտեմբերին Խորեն Մուրադբեկյանը նշանակվում է Նոր Բայազետի (այժմ՝ Գավառ) եկեղեցիների բարեկարգիչ: 1907 թվականի հունիսին Մկրտիչ Ա Վանեցի Կաթողիկոսի կոնդակով նշանակվում է Նոր Բայազետի և Դարաշիչակի (այժմ՝ Ծաղկաձոր) եկեղեցիների բարեկարգիչ:

միաձայն որոշումը և ըստ արժանվույն գնահատելով Տ. Խորեն վարդապետի ունակությունները, Վեհափառ Մաթեոս Բ Իզմիրլյանը 1909թ. նոյեմբերի 25-ին կրկին դիմում է ռուսական կառավարությանը՝ նրան Երևանի թեմական առաջնորդ հաստատելու խնդրանքով¹: Դեկտեմբերի 4-ին, ստանալով Կովկասի փոխարքայի համաձայնությունը, դեկտեմբերի 13-ի սրբատառ կոնդակով Տ. Խորեն վարդապետ Մուրադբեկյանին կարգում է Երևանի հայրապետական թեմի փոխթեմակալ²:

1909 թվականի տվյալներով՝ Երևանյան թեմի մեջ մտնում էին Կարսի, Հին Նախիջևանի, Սյունյաց (Տաթևի), Ալեքսանդրապոլի, Նոր Բայազետի փոխանորդությունները՝ 650 գործող եկեղեցիներով և 16 վանքերով, որոնք ունեին 1 արքեպիսկոպոս, 5 վարդապետ, 3 վանական, 743 քահանա և եկեղեցու 316 սպասավոր³:

Երևանի հայրապետական թեմի առաջնորդության վերին աստիճանի պատասխանատու և դժվարին պաշտոնը ստանձնելով՝ Խորեն վարդապետ Մուրադբեկյանն իրեն հատուկ եռանդով լծվում է աշխատանքի և իր փոխթեմակալության երկրորդ տարում հանդես է գալիս հայ ազգաբնակչությանն ուղղված կոչով՝ Երևանի թեմում եկեղեցական կյանքն աշխուժացնելու նպատակով: Կոչում մասնավորապես ասված էր, որ վարդապետն ինչքան էլ միջոցներ է ձեռք առել եկեղեցիների դրությունը բարելավելու, դրանք հուսահատ հայ ժողովրդի մխիթարության կենտրոններ դարձնելու համար, բոլորն էլ ապարդյուն են անցել, քանի որ ժողովուրդը՝ Երևանի քաղաքային բնակչությունը, անտարբերությամբ է լցված դեպի եկեղեցին և սուրբ հավատքը: Այնուհետև Խորեն Մուրադբեկյանը, շարունակելով կոչը, ավելացնում է, որ Կովկասի փոխարքայության մշակած կանոնադրության համաձայն՝ եկեղեցու և նրա հետ կապված քաղաքակրթական հիմնարկների, այսինքն՝ դպրոցների և ուսումնարանների իրական տնօրենը հանդիսանում է հայ ժողովուրդը՝ ծովսը: Հետևաբար, ելնելով այս սկզբունքից հայ ժողովուրդի պատասխանատվությունն էլ ավելի է մեծանում, նա իր գիտակցությամբ և

¹ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 148, թ. 87:

²Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, Գիրք Բ, Խորեն Ա Մուրադբեկյան Կաթողիկոս Ամենայն Հայոց (հոգևոր գործունեությունը 1901-1938թթ.), Կազմեց՝ Ս. Բեհբուրդյան, Երևան, 1996, էջ 13:

³ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 10837, թթ. 120, 146:

վերաբերմունքով պետք է կենդանացնի դարերից իրեն հասած հոգևոր ժառանգությունը՝ եկեղեցին և նրա անբաժան հիմնարկները՝ ծխական դպրոցները:

Մուրադբեկյանը վերջում վստահություն է հայտնում, որ այս կոչն իր շուրջ կհամախմբի բոլոր դասակարգերին՝ հանուն եկեղեցու և ազգային միաբանության¹:

Վարդապետն իր գործունեության ընթացքում, բացի հոգևոր, կրթամշակութային գործերից, անմասն չէր մնում նաև գյուղի բնակիչներին վերաբերող խնդիրներից: 1910 թվականի ապրիլի 30-ի իր նամակներից մեկում՝ ուղղված Ամենայն Հայոց Կաթողիկոս Մատթոս Բ Իզմիրյանին, նա բարձրաձայնում է Էջմիածին գավառի Գրամփա գյուղի բնակիչներին վերաբերող հողային խնդիրը՝ խնդրելով Կաթողիկոսին միջնորդել, որ գյուղապետ Թադեոս Քալանթարյանը կատարի հողային ճիշտ բաշխում, այլապես բնակիչները որոշել են ընդունել հուդայականություն²:

Վերը նշված երկու փաստաթղթերից պարզ է դառնում, որ Խորեն վարդապետ Մուրադբեկյանը, տեսնելով ժամանակի խնդիրներն ու հասարակության անտարբերությունը, ջանում էր հնարավոր ամեն բան անել՝ հայ բնակչությանն ուղղորդելու և օգնելու համար, և պատահական չէր, որ նրա գործունեությունն աննկատ չմնաց Երևանի թեմի պատգամավորների աչքից:

1910 թ. մայիսի 7-ին Երևանի թեմի պատգամավորական ժողովը հայտագիր դիմումով միջնորդում է Մատթոս Բ Իզմիրյան Կաթողիկոսին՝ Խորեն վարդապետին եպիսկոպոսության աստիճան շնորհելու համար³: Նույն թվականի սեպտեմբերի 18-ին Խորեն վարդապետը, Բաբկեն Կյուլեսերյանը, Թորգոմ Գուչակյանը, Կարապետ Մազլումյանը և մի քանի այլ նշանավոր վարդապետներ Սբ. Գայանեի վանքում ստանում են ծայրագույն վարդապետի աստիճան⁴, իսկ մեկ օր անց՝ սեպտեմբերի 19-ին՝ Վարագա Սբ. Խաչի Բուն Բարեկենդանի կիրակի օրը, ձեռամբ Մատթոս Բ Հայրապետի Մուրադբեկյանը ձեռնադրվում է եպիսկոպոս՝

¹Տե՛ս Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, Գիրք Բ, Խորեն Ա Մուրադբեկյան Կաթողիկոս Ամենայն Հայոց (հոգևոր գործունեությունը 1901-1938թթ.), Կազմեց՝ Ս. Բեհրուրյան, Երևան, 1996, էջ 14:

² Տե՛ս նույն տեղում, էջ 15:

³ ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 202, թ. 4:

⁴ Նշանավոր ճեմարանականներ, Պրակ Ա, Ս. Էջմիածին, 2015:

օճակից ունենալով Մեծի Տանն Կիլիկիո Ս. Բաբկեն ապագա աթոռակից Կաթողիկոսին, Երուսաղեմի Ս. Թորգոմ և Կ. Պոլսի Ս. Զավեն Պատրիարքներին¹:

Սեպտեմբերի 20-ին Ս. Խորեն եպիսկոպոսը պարզևատրվում է եպիսկոպոսական պանակեով², իսկ հոկտեմբերի 20-ին Վեհափառ Հայրապետը նրան նվիրում է իր անձնական պանակեն³:

1910 թվականի դեկտեմբերի 11-ին վախճանվում է Ամենայն Հայոց Մատթեոս Բ Իզմիրյան Կաթողիկոսը: Եվ դեռ այդ ժամանակ, իբրև արժանավոր թեկնածու, մամուլում հիշվում է 37-ամյա Խորեն սրբազան Մուրադբեկյանի անունը՝ Կ. Պոլսի պատրիարք Եղիշե Դուրյանի հետ միասին⁴: 1910 թվականի հոկտեմբերի 30-ին Երևանի թեմն իր մեկ միլիոն հայությանը և մոտ 100 պատգամավորական նվիրակներով գաղտնի քվեարկությամբ, ձայների մեծամասնությամբ Խորեն սրբազանին առաջադրում է կաթողիկոսության թեկնածու⁵: Այս ամենը կատարվում է հակառակ Ս. Խորեն եպիսկոպոսի ցանկության, քանի որ նա արդեն կազմել էր քսան անուններից կազմված մի ցանկ և առաջարկում էր համաձայնության գալ և ընտրել առավել արժանավորին⁶:

Ս. Խորեն սրբազանի առաջնորդության տարիներին Երևանի թեմի տարբեր գավառներում վերանորոգվեցին, վերակառուցվեցին ու հիմնվեցին տասնյակ եկեղեցիներ: Միայն 1913 թվականին վերանորոգվեցին և վերակառուցվեցին Աշտարակի շրջանի Ղարաջորան գյուղի մոտ գտնվող Թուխ մանուկ մատուռը, Կարսի Սբ. Աստվածածին եկեղեցու զանգագատունը, Երևանի Սբ. Հավիաննես եկեղեցին,

¹«Էջմիածին», Դ-Ե 1994, (Վարուժան Սրկ. Տերտերյան, Անցյալի լուսավոր էջերից, Մուրադբեկյան Ամենայն Հայոց Կաթողիկոսի կյանքն ու գործունեությունը), էջ 70:

²Պանակեն եպիսկոպոսական կրծքի զարդ է՝ ձվաձև մի տուփ, որի մեջ դրված են լինում սրբերի մասունքներ: Այն լանջախաչի նման պատվանշան է, որ կրում են շրթայով: Քանի որ պանակեն հունարեն panagia բառն է, որ նշանակում է Աստվածածին, այդ պատճառով այս զարդը արտաքին կողմից սովորաբար կրում է Աստվածամոր սրբապատկերը: Շուրջը զարդարված է ակներով, վերևի մասում թագի նման զարդ ունի, իսկ ներքևից կախված է երկու զարդ: Շնորհվում է բոլոր եպիսկոպոսներին կաթողիկոսի կողմից: Կախվելով նվիրապետի կրծքին՝ պանակեն խորհրդանշում է նրա հավատը և սերն առ Աստված:

³ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 378, թ. 17:

⁴Տե՛ս Հ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հտ. 8, Երևան, 1997, էջ 473:

⁵Վավերագրեր հայ եկեղեցու պատմության ...էջ 24-25:

⁶ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 182, թ. 15:

Նախիջևանի գավառի Ուզուն-Օրա գյուղի Աբ. Աստվածածինը, Սուրմալուի շրջանի Թեջրլու գյուղի Աբ. Գևորգը և այլ եկեղեցիներ: Կառուցվեցին Կարսի Գոեռխանա գյուղի Աբ. Փրկիչ, Իգդիրի Աբ. Սահակ, Շարուր շրջանի Քեշթաղ գյուղի, Երևանի շրջանի Թագա գյուղի, Կոտայքի Բաշգյուղի Աբ. Կարապետ, Ղամարլուի Գյոդաքլու, Նախիջևանի գավառի Ղուշչի և Աստապատ, Նոր Բայազետ գավառի Բասարգեչար և Ղազնաֆար գյուղերի Աբ. Աստվածածին եկեղեցիները և Ալափարսի Աբ. Վարդան եկեղեցու զանգակատունը: Բնավ զարմանալի չէր, որ այս եկեղեցիների վերաշինման, կառուցման նախաձեռնողը Խորեն Մուրադբեկյանն էր, ով ջանք և եռանդ չէր խնայում այս գործում: Բասարգեչար գյուղի եկեղեցու հիմքը դրվել էր Տ.Խորեն վարդապետի կողմից դեռևս 1903 թվականին, սակայն նյութական միջոցներ չլինելու պատճառով նրա կառուցումն ամբողջովին կանգ էր առել: Եկեղեցու շինարարությունը մեծ թափով սկսվում է միայն այն բանից հետո, երբ Տ. Խորեն եպիսկոպոս Մուրադբեկյանին հաջողվում է համոզել Բասարգեչարի շրջանի նորանշանակ դատարանի քննիչ Տիգրան Ալթունյանին իր ձեռքը վերցնել այդ գործը: Տիգրան Ալթունյանը տեղի բնակիչ Ղարիբ Բոյախյանի աջակցությամբ ավարտին է հասցնում եկեղեցու շինարարությունը¹:

Կարևորելով մատաղ սերնդի կրթության և դաստիարակության գործը՝ Տ. Խորեն սրբազանը մեծ եռանդով ու թափով ձեռնամուխ եղավ Երևանի թեմական դպրոցի ու թեմի եկեղեցական-ձխական դպրոցների բարեկարգման ու նոր դպրոցների բացման գործին: Արդեն 1912թ. հուլիսի 21-ին Կովկասի հայոց բարեգործական ընկերության խորհրդին ուղղած գրությամբ սրբազանը հայտնում էր, որ թեմի Թեջարաբակ, Ուլիա Նորաշեն, Քարվանսարա, Զոլախաչ, Քյուլաղան, Ղշլաղ ու Գյոզալդարա գյուղերում իր ջանքերով կառուցվել են դպրոցական հարմարավետ շենքեր և նպաստ է խնդրում նոր ուսումնական տարում դպրոցները բացելու համար²:

Երևանի փոխթեմակալ Տ. Խորեն եպիսկոպոսի կողմից դպրոցաշինական ազգօգուտ ու կարևոր գուրծը նույն թափով

¹ՎԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 641, , թթ. 26, 34, 41, 48, 56, գ. 567, թ. 11, 2,14, 16, 36, 42, 45, 48, 55, 69, գ. 567, թ. 14, 7:

²Տե՛ս Գ. Ավագյան, Նահատակ Հայրապետը, Էջմիածին 2008, էջ 24:

շարունակվեց նաև հաջորդ տարիներին՝ ընդգրկելով թեմի բոլոր գավառներն ու շրջանները: Սկսվեցին Նախիջևանի, Մեծ Ղարաքիլիսայի, Իգդիրի, Աշտարակի շրջանի Օշական, Նախիջևանի գավառի Յղնա, Կարսի շրջանի Բագարան, Բեկլի Ահմեդ, Բայրախտար, Թազաքենդ, Բերնա, Դարալագյազի Էրդափին, Գառնիի շրջանի Ղամարլու գյուղերի եկեղեցական-ծխական դպրոցների շենքերի կառուցման աշխատանքները¹: Շատ տեղերում սրբազանն ինքն էր կատարում հիմնօրհներթի արարողությունը՝ ավելի ոգևորելով ու քաջալերելով մարդկանց, անհրաժեշտության դեպքում տեղում նոր որոշումներ կայացնելով: 1912թ. հրդեհվեց Մեծ Ղարաքիլիսայի ծխական դպրոցի շենքը: Սողոմոն և Ալեքսանդր Աբովյանները ժամանակավորապես դպրոցի հոգաբարձության տրամադրության տակ դրին իրենց շինությունները: 1913 թ. մայիսին Տ. Խորեն եպիսկոպոսը ժամանեց Ղարաքիլիսա՝ տեղում իրավիճակին ծանոթանալու համար: Նա կարողացավ համոզել Աբովյան եղբայրներին իրենց շենքը նվիրել դպրոցին, դեռ ավելին՝ նրանք հանձն առան շենքը դպրոցի պայմաններին հարմարեցնելու համար անհրաժեշտ 500 ուրբլու ծախսը²: Նույն թվականին՝ Ալեքսանդրապոլում եղած ժամանակ, Տ. Խորեն եպիսկոպոսը, տեսնելով Աբ. Փրկիչ եկեղեցու կալվածքների վիճակը (որոնց միջոցներով էր պահվում դպրոցը), հասկանում է, որ եթե ժամանակին չվերանորոգվեն շինությունները, ապա շուտով փուլ կգան: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ նա իր մոտ է հրավիրում Աբ. Փրկիչ եկեղեցու կրպակների վարձակալներին, և երկար բանակցելուց հետո վարձակալները համաձայնում են վերանորոգումների և շինարարության համար տրամադրել 5000 ուրբլի³:

Իհարկե, կրթության զարգացման ասպարեզում նրա գործունեությունը չէր սահմանափակվում միայն դպրոցական շենքերի վերանորոգմամբ ու նոր դպրոցներ բացելով: Նա գործուն մասնակցություն

¹ ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 406, թթ. 8, 21, 25, 40, 41, 54, 89, 87, 103:

² Տե՛ս նույն տեղում գ. 406, թթ. 35-38:

³ Տե՛ս **Գ. Ավագյան**, նշվ. աշխ., նույն տեղում:

ունեցավ Սբ. Էջմիածնի կենտրոնական ուսումնական հանձնաժողովի կողմից միջնակարգ դպրոց բացելու նախագծի մշակմանը¹:

Երևանի փոխթեմակալն իր գործունեության շրջանում ակտիվ նամակագրական կապի մեջ էր նաև հայ մտավորականների հետ՝ փորձելով նրանց օգնությամբ լուծում տալ թեմում առաջացած որոշ խնդիրների:

Հայոց մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանին ուղղված նամակներից մեկում կարդում ենք. «Ստացա նամակդ, որով յիշեցրել էիր ինձ Թեմական դպրոցում սովորող «սկսնակ գրողին» ամսական հինգ թուրքի վճարելու մասին: Կարող եմ հաղորդել քեզ, որ խոստումներս մոռանալու սովորութիւն չունիմ և մի ամսականը արդեն վճարել եմ և ասել, որ ամէն ամիս գայ ինձ մօտ և ստանայ հինգ թուրքի: Նույնքան էլ վճարում է Բարեգործական ընկերութեան տեղական վարչութիւնը:²» Նամակի բովանդակությունից պարզ է դառնում, որ Մուրադբեկյանն անմասն չէր երիտասարդ հայ մտավորականության առջև ծառայած խնդիրներից և հնարավորինս ամեն ինչ անում էր՝ նրանց աջակցելու և խրախուսելու հարցում:

Ներակայացնելով Տ. Խորեն Մուրադբեկյանի գործունեությունը՝ կարող ենք ասել, որ նա իր կոչմանն հավատարիմ ծառայում էր հայոց եկեղեցուն և հայ ժողովրդին՝ մոռանալով իր անձն ու վեհությունը: Մեջբերում Տ. Խորեն եպիսկոպոս Մուրադբեկյանի նամակից՝ ուղղված Տ. Հարություն քահանա Ճուղլուրյանին. ««Երբ մեկը մեծանում, բարձրանում է պաշտօնով, խոնարհին մոռանում է, որին մնում է միայն նորից և նորից աղերսել»: Այս դարձուածքը չափազանց վիրավորական է ինձ համար, որովհետև **ես մեծութիւնը գտնում եմ միմիայն խոնարհութեան մեջ: Բարձր պաշտօն ունեցող անձնաւորութիւնը մեծ կարող է լինել միմիայն այն ժամանակ, երբ մօտ է խոնարհին:** Հպարտ բարձր պաշտօնեան, որը խոնարհին մոռանում է, մեծ է միայն իր աչքում, իր երևակայության մեջ»³:

¹Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, Գիրք Բ, Խորեն Ա Մուրադբեկյան Կաթողիկոս Ամենայն Հայոց (հոգևոր գործունեությունը 1901-1938թթ.), Կազմեց՝ Ս. Բեհրուդյան, Երևան, 1996, էջ 31:

²Տե՛ս Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ), Հ. Թումանյանի ֆ., N 1404:

³ Տե՛ս ԳԱԹ, Հարություն քին. Ճուղլուրյանի ֆ., N 9697:

Նամակի վերջին տողերը կարծես թե ամբողջովին բնութագրում են Մուրադբեկյան անձին ու հոգևորականին:

Տ. Խորեն վարդապետը Երևանի թեմական առաջնորդի պաշտոնում մնաց մոտ 15 տարի: Այդ տարիները հազեցած էին հայ ժողովրդի համար խիստ բախտորոշ ու շրջադարձային իրադարձություններով: Նրա առաջնորդության տարիները կարելի է պայմանականորեն բաժանել մի քանի ժամանակահատվածի՝ նախապատերազմյան տարիներ (1909-1914թթ.), Առաջին համաշխարհային պատերազմի տարիներ (1914-1918թթ.), Հայաստանի առաջին Հանրապետության տարիներ (1918-1920թթ.) և Հայաստանի խորհրդային իշխանության հաստատման տարիներ (1920-1924թթ.): Նշված ժամանակահատվածներից յուրաքանչյուրն առկա եկեղեցաշինական, կրոնական, վարչական, ուսումնական խնդիրներին հավելեց նորանոր, առավել դժվարին ու օրհասական խնդիրներ: Մեծ երևակայություն պետք չէ՝ պատկերացնելու համար, թե Երևանի նման կարևորագույն ու լայնածավալ թեմի առաջնորդին ինչպիսի փորձություններ էին սպասվում նման պատմաքաղաքական իրադարձությունների հորձանուտում:

Երևանի փոխթեմակալ Տ. Խորեն եպիսկոպոսի ձեռնարկած եկեղեցաշեն ու ազգաշեն գործունեությունը անկասկած կշարունակվեր, եթե չսկսվեր Առաջին համաշխարհային պատերազմը:

Քանակի քաներ՝ Խորեն Ա Մուրադբեկյան, Երևանի թեմ, փոխթեմակալ, նախապատերազմյան տարիներ, եկեղեցաշինություն, դպրոցաշինություն:

THE FIRST PERIOD OF BISHOP KHOREN MURADBEKYAN'S VICE-DIOCESE IN YEREVAN (1909-1914)

Q. KH. HAYRAPETYAN

Lecturer at the Department of History of GSU

The purpose of the article is to present the first period (1909-1914) of Bishop Khoren Muradbekyan's vice-diocese in Yerevan which is known in the historiography as "peaceful years". During these years, Bishop Khoren Muradbekyan

became famous for his church building, educational and social activities, which continued in his later years of his diocese.

**ПЕРВЫЙ ПЕРИОД ДЕЯТЕЛЬНОСТИ ВИКАРИЯ ЕРЕВАНСКОЙ
ЕПАРХИИ, ЕПИСКОПА ХОРЕНА МУРАДБЕКЯНА (1909-1974 ГГ.)**

К. Х. АЙРАПЕТЯН

Преподаватель кафедры истории ГГУ

Целью статьи является рассмотрение, известного в историографии как «мирные годы», первого периода (1909-1974 гг.) деятельности викария Ереванской епархии, епископа Хорена Мурадбекяна. В эти годы епископ Хорен Мурадбекян прославился своей церковно-строительной, образовательной и общественной деятельностью, имевшей продолжительный характер в течение последующих лет епаршества.